

# ՀԱՅ ԿԱՌՋ ԻՐԱՒԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻԾԱԿԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ- ՍՈՎՈՐՈՒԹԱՑԻՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայագիտութեան մէջ կնոջ իրաւական պաշտպանութեան հարցն անհրաժեշտ չափով չի ուսումնասիրուած, թէեւ առանձին աշխատութիւններում այս կամ այն չափով լուսաբանուած են որոշ խնդիրներ:

Ցաւակնութիւն չունենալով տալու առաջադրուած հարցի ամբողջական ուսումնասիրութիւնը, սոյն յօդուածում փորձել ենք քննարկել հայ կնոջ ազատութեան, կեանքի, առողջութեան, պատուի ու արժանապատուութեան պաշտպանութեան, ամուսնական ու ընտանեկան յարաբերութիւններում նրա կարգավիճակի հետ առնչուող եկեղեցական եւ ժողովրդական-սովորութային իրաւանորմերը:

Քաղաքական-իրաւական պաշտպանութեան տեսանկիւնից, մասնաւորապէս Դաւիթ Ալաւկայ որդու ՀԱ. կանոնում, ինչպէս եւ Մխիթար Գօշի ու Մմբատ Սպարապետի դատաստանագրքերում այն տեսակէտն էր պաշտպանուում, թէ կինը չէր կարող քահանայ ձեռնազրուել, զինուորական դառնալ, խաղողից գինի մզել (այդ օրէնքում շատ յստակ նկատում է նաեւ սովորութային իրաւունքի հետ կապուած որոշակի աղերսներ), շուկայում առեւտուր անել:<sup>1</sup> Կինը ոչ միայն չէր կարող դատաւոր լինել, այլեւ վկայ կանչուել: Նոյնիսկ այն դէպքում, երբ ականատեսները միայն կանայք էին եւ տղամարդ վկաներ չինելու պատճառով դատարանը հարկադրուած էր հարցը լուծել կանանց ցուցմունքների հիման վրայ, ապա վկայ կանանց թիւը պիտի տղամարդ վկաների համեմատութեամբ կրկնակի լինէր՝ չորսից վեց անձի հաշուարկով: Ընդ որում, վկայ կանայք դատարան չէ-

1 ՄԽԻԹԱՐ ԳՕԾ, Դատաստանագիրք Հայոց, 1880, 36:

ին ներկայանում, այլ նրանց լսում էին տղամարդիկ՝ հաւասար թուով, եւ նրանց անունից դատարանում ցուցմունք տալիս: Բացառութիւն էին կազմում այնպիսի դէպքերը, երբ կինը որեւէ կնոջ կամ իր ամուսնու նկատմամբ էր ցուցմունք տալիս եւ նման դէպքերում կնոջ ցուցմունքն ընդունում էր:

Թէեւ Մխիթար Գօշը կնոջը վկայ կանչելու հարցի նման լուծումը բացատրում էր նրանով, որ կանայք իրենց էութեամբ դիւրագրգիռ լինելով, շատ հեշտ էին թիւրիմացութեան մէջ ընկնում, սակայն իրականում նման մօտեցման պատճառը կնոջ նկատմամբ գոյութիւն ունեցող ընդհանուր հայեացքներն էին: Այդ հանգամանքն աւելի ցայտուն կերպով է արտայայտուել Սըմբատ Սպարապետի Դատաստանագրքում (յօդ. 78). տղամարդը գլուխն է, իսկ կինը ոտները ինչպէս ոտները ենթարկում են գլխին, այնպէս էլ կինը՝ մարդուն:<sup>2</sup> Այդ իրաւական նորմը նրա Դատաստանագրքի գլխաւոր սկզբունքներից մէկն էր եւ դրա հիման վրայ շատ հարցեր յաճախ լուծում էին ի վնաս կնոջ, նրան տղամարդու հետ անհաւասար դրութեան մէջ զնելով: Նմանատիպ պայմաններում պետական գործունէութեան մէջ այս կամ այն չափով մասնակցութիւն կարող էին ունենալ միայն աւատատիրական բարձր խաւին պատկանող կանայք: Նման իրաւունքից ամէնից առաջ օգտում էր թագուհին: Թագաժառանգ համարւում էր տղան, իսկ եթէ թագաւորը արու զաւակ չունէր՝ ժառանգում էր գուստը: Քանի որ ժառանգութիւնն անցնում էր հայրական գծով, ուստի թագաժառանգ կարող էր լինել նաեւ թագաւորի եղբայրը:<sup>3</sup> Կալուածքի կառավարման գործում որոշ գործառոյթներ ունէր կալուածատիրոջ կամ նախարարի կինը, որ սակայն շատ սահմանափակ իրաւունքներ ունէր:

Քաղաքացիական-իրաւական պաշտպանուածութեան հարցերում, մասնաւորապէս գոյքային յարաբերութիւններում, ժառանգման իրաւունքը վճռական նշանակութիւն ունէր, դրա շնորհիւ է, որ արտադրութեան հիմնական միջոցները մնում էին մասնաւոր սեփականութեան ոլորտում: Թէեւ ժառանգութեան հիմնախնդիրը աւատատիրական հասարակարգի, նոյնիսկ ամէն մի խաւի, դէպքում ունէր լուծման որոշ առանձնայատկութիւններ, բայց նկատում էին ընդհանրական բնոյթի որոշակի ձեւեր:

2 ՄՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Դատաստանագիրք, Երևան, 1958, 84:

3 Անդ, 7:

Ժառանգական իրաւունքը սահմանուած էր հայրական գը-  
ծով, բայց ոչ երբեք մայրական։ Նոյնիսկ այն դէպքում, երբ կի-  
նը ժառանգաբարաժին էր ստանում, դարձեալ ժառանգական ի-  
րաւունքը հայրական գծով էր, այսինքն՝ ժառանգական իրաւուն-  
քի կրողը ոչ թէ կին էր, այլ՝ միայն տղամարդը։<sup>4</sup> Այդ հանգա-  
մանքը նախատեսուած էր Մխիթար Գօշի Դատաստանագրքի 62,  
63, 64, Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի 118, 119 եւ այլ  
յօդուածներում։ Ամուսինների համատեղ կեանքի ընթացքում  
ձեռք բերուած ընդհանուր սեփականութիւնը տղամարդ ամուսի-  
նը կարող էր ըստ իր ցանկութեան կտակել (Սմբատ Սպարա-  
պետ, Դատ., յօդուած 145)։ Հետեւաբար, ընդհանուր սեփականու-  
թեան իրաւունքը տնօրինում էր տղամարդը, քանի որ կտակի  
առկայութեան հանգամանքում ժառանգման հարցը լուծւում էր  
բացառապէս դրա հիման վրայ։ Տուեալ դէպքում տղամարդուն  
տարվ նման արտօնութիւն, ամուսինները դրանով իսկ դրւում  
էին անհաւասար դրութեան մէջ։<sup>5</sup>

Հստ եկեղեցական կանոնների, եթէ կնոջ գոյքը որոշակի-  
օրէն առանձնացուած էր, այն անցնում էր կնոջ ժառանգներին։<sup>6</sup>  
Երեխայ ունենալու դէպքում ծնողների ամբողջ ունեցուածքն  
անցնում էր նրան։ Հօր վրայ էր դրւում մօր եւ երեխայի նկատ-  
մամբ պարտականութիւնը։ Ամուսինների գոյքի ժառանգման  
սկզբունքները շատ նման էին միմեանց։ Ժառանգը տղան էր, իսկ  
եթէ տղայ չունէին՝ աղջիկը, սակայն ժառանգութիւնը աղջկայ  
գծով չէր շարունակւում։ Կնոջ մայրը, քոյրը ժառանգ չէին հա-  
մարւում, ամուսնացած երկու քոյրերը բաժնեմաս էին ստանում  
մի տղայի չափով։ Մայրը մահանալու դէպքում, նրա գոյքը բա-  
ժանւում էր երկու հաւասար մասի՝ մէկը յատկացւում էր երե-  
խայի հօրը, միւսը՝ մօր հօրը (պապին)։ Զքեր կնոջ գոյքը ժա-  
ռանգում էր նրա հայրը։ Ամուսնուն էր յատկացւում կնոջ գոյքի  
մէկ վեցերորդ մասը, որպէս ամուսնական համատեղ կեանքի  
յարգանք։<sup>7</sup> Այն դէպքում, երբ տղամարդն ամուսնում էր այն-  
պիսի կնոջ հետ, որ երեխայ չունէր, ապա կնոջ գոյքի մէկ քա-  
ռորդ մասն անցնում էր ամուսնուն։<sup>8</sup> Գոյքաբաժանման ու ժա-

4 Մխիթար ԳՕԾ, Դատաստանագիրք, 370:

5 ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Դատաստանագիրք, 109:

6 Անդ, 130:

7 Մխիթար ԳՕԾ, Դատաստանագիրք, 377:

8 Անդ, 403:

ռանգման հարցում **Մխիթար Գօշի** մօտ նկատում է ամուսինների միջեւ հաւասարութիւն հաստատելու միտում։ Այս տեսակչտից բնորոշ է Դատաստանագրքի Բ. մասի 96 յօդուածը։ Եթէ աղջիկը չէր ամուսնանում, մնում էր տանը եւ ստանում էր տղային հաւասար բաժնեմաս, իսկ ամուսնացած աղջիկը՝ կէսի չափով, քանի որ ամուսնութեան ժամանակ նա արդէն տարել էր իր օժիտը՝ որպէս բաժնեմասի կէսը։ Այլ կերպ ասած, **Մխիթար Գօշի** կարծիքով հաւասարութիւն չէր հաստատում։ Թէեւ այդ բացատրութիւնը համոզիչ չէ, քանի որ կնոջ օժիտը ոչ մի չափով ապագայ ժառանգութեան կէսը չէր կարող լինել՝ զանազան պատճառներով, սակայն նման ձգտումը բնորոշ էր տուեալ ժամանակաշրջանին։

Կինն ամուսնու տուն չէր գնում հայրական գոյքի իր բաժնեմասը տանելով, որ կատարում էր ամուսնու կարգադրութեամբ։ Կնոջ մահուան դէպքում գոյքն անցնում էր երեխային, իսկ երեխայ չունենալու դէպքում վերադարձւում էր ծնողներին կամ եղբօրը։ Եղբայրները բաժանուելու ժամանակ պարտաւոր էին առանձնացնել հարսի օժիտը, իսկ եթէ օժիտը ծախսուել էր բոլորի կողմից, ապա այն վերականգնւում էր ընդհանուր գոյքից։<sup>9</sup>

**Այժմ** անդրադառնանք ժառանգման երեւոյթի ժողովրդական դրսեւորումներին։ Անշուշտ, մեծ էր այդ իրաւունքի վրայ Աւագութեան իրաւունք կոչուած երեւոյթը, որին որոշակի նշանակութիւն էր տրուում յատկապէս ընտանիքի բաժանման ժամանակ ընդհանուր գոյքի բաշխման խնդիրների կապակցութեամբ։ Այսպէս, բաժանուելու պահանջն առաջ էր գալիս գերդաստանի աճելու կամ խոշորանալու դէպքերում, երբ բնակմակերեսն արդէն չէր բաւարարում եւ տնտեսութիւնը բարդանում էր։ Բաժանութիւնը հիմնականում կատարում էր տան մեծի եւ ընդհանուր պապի մահից յետոյ։ Անցեալում եղբայրներից ոչ ոք իրաւունք չունէր հօր եւ մօր կենդանութեան դէպքում առանձնանալ մեծ ընտանիքից։<sup>10</sup> Բաժանուում էին նաեւ գերդաստանի առանձին ճիւղերի միջեւ ծագած անհամաձայնութիւնների հետեւանքով, եղբ տան աւագը չէր կարողանում կատարել հաշտեցնելու իր պարտականութիւնը։ Պատահում էր, որ անջատուում էին նաեւ ընտանիքի այն անդամները, որոնք ունէին սեփական

9 Անդ, 432:

10 ԼԻՍԻՑԵԱՆ, Ս., Զանգեզուրի հայերը, ՀՍՍ ԳԱԱ, Երևան, 1969, 223:

միջոցներ դրսում կատարած իրենց աշխատանքներից եւ այդ ե-կամուտը չէին կամենում դնել տան մեծի տրամադրութեան տակ եւ բաժանել ընտանիքի այլ անդամների հետ: Բաժանումը տեղի էր ունենում տանուտէրի կամ նրա ներկայացուցչի եւ բոլոր դէպերում մերձաւոր բարեկամների մասնակցութեամբ: Առանձնացում էին նախ եւ առաջ հարսների օժիտները, որոնք նրանց առանձնակի սեփականութիւնն էին համարւում, ապա՝ տան աղջկայ բաժինը, որն ապագայում պիտի տրուէր նրան որպէս օժիտ, նոյնպէս եւ մօր բաժինը: Սովորաբար առանձնացում էր նաեւ աւագ եղբօրը տրուող աւելորդ մասը, որ կոչւում էր մեծահարկ: Վերջինս իրենից ներկայացնում էր՝ ապրանքից, անասունից կամ հողից բաղկացած յաւելեալ մաս՝ նախատեսուած այդ աւագութեան համար: Մնացած ամբողջ գոյքը՝ տնային սարքաւորումը, գործիքները, անասունը եւ հողը բաժանում էր հաւասարաչափ՝ ըստ եղբայրների թուի: Մէկ եղբայր էլ համարւում էր հայրը, եթէ ի հարկէ ողջ էր: Երբ այդ հաւասար բաժինները որոշուում էին, վերջնական բաշխումը լինում էր չոփով՝ վիճակով: Չոփ հանելու համար կանչում էին մի երեխայի, երբեմն քահանային: Եթէ եղբայրներից մէկն ու մէկը ազապ էր, առաջուց առանձնացնում էին ազապիրչօնը, ազապութեան աւելորդ բաժինը, միջինը այն ծախքերի, ինչ-որ արուել էր նրա ամուսնացած եղբայրների հարսանիքներին:<sup>11</sup> Մայրը մեծ մասամբ մնում էր փոքր տղայի հետ՝ նրա անփորձ կնոջն օգնելու համար, սակայն երբեմն էլ գերադասում էր ապրել աւագ տղայի ընտանիքում, որ պայմանաւորուած էր աւագ հարսի հետ ընդհանուր տնտեսութիւն վարելու աւանդոյթով:

Հստ սովորութային իրաւունքի, «անձնական սեփականութիւն են համարւում կանանց զարդերը, մասնաւորապէս՝ մատանիները, օղերը եւ այլն, եւ ընտանիքի անդամների գէնքերը եւ այլն: Բաժանուում էր ամբողջ գոյքը, բացի առանձին անդամների անհատական սեփականութիւնից: Բաժանուում էին սակայն ոչ բոլոր կառոյցները եւ առարկաները: Բաժանուածների եւ նրանց ժառանգների ընդհանուր օգտագործմանն էր մնում օրինակ ջրաղացը:

11 Անդ: Բաժանման այդ գործընթացից դուրս էր մնում օրինակ ջրաղացը, որ մնում էր որպէս ընդհանուր օգտագործման կարևորագոյն տնտեսական-արտադրական կառոյց:

Հայոց մէջ ուղղակի ժառանգ էին համարւում արու զաւակները, որոնք ժառանգում էին շարժական եւ անշարժ գոյքը, ինչպէս եւ հողաբաժինները: Եթէ եղբայրները կային, աղջիկները հայրական գոյքից ոչինչ չէին ստանում: Իսկ եթէ եղբայրներ չկային, մահացածի գոյքն անցնում էր կնոջն ու դուստրերին: Ընդ որում, մահացած սեփականատիրոջ իրաւունքներից օգտուում էր միայն նրա կինը:<sup>12</sup> Պէտք է նկատել, որ վերոնշեալն իր արտացոլումն էր գտել նաեւ կանոնագրքերում եւ աւելի բնորոշուել դատաստանագրքերում: Տանտիրոջ մահից յետոյ, ո՛չ կինը, եւ ո՛չ էլ աղջիկները չէին զրկուում հողաբաժիններից, որոնցից օգտուում էին աղջիկները մինչեւ ամուսնանալը: Իսկ կինը մինչեւ մահը կամ երկրորդ անգամ ամուսնանալը: Բազմաթիւ գիւղերում աղջիկների մարդու գնալու դէպքում նրանց հողաբաժիններն անցնում են նրանց ամուսիններին, եթէ միայն սրանք նոյն հասարակութեան անդամներ են: Հակառակ դէպքում հասարակութիւնը նրանցից առնում էր այդ հողերը: Պէտք է ասել, որ այդ արւում էր միայն վարելահողերի վերաբերեալ եւ ոչ թէ այդիների եւ շէնքերի, որոնք անցնում էին մարդու գնացած աղջիկների ամուսիններին առանց որեւէ սահմանափակման:

Եթէ մահացած սեփականատիրոջից յետոյ ուղղակի ժառանգ չկար, հողաբաժինները՝ վարելահողը եւ խոտհարքը համայնքին էր տրւում, իսկ մնացած գոյքը, այդ թւում՝ այդիները, ջրաղացները եւ տնտեսական միւս կառոյցներն անցնում էին մերձաւոր ազգականներին:<sup>13</sup> Այս մօտեցումը եւս իր պաշտպանութիւնն է գտել օրէնսդրական ակտերում:

Ջրաժանուած եղբօր մահից յետոյ գոյքի նրա բաժինը մնում էր նրա կենդանի եղբօր արամադրութեան տակ, որ պէտք է պահէր մահացածի կնոջը եւ զաւակներին: Եթէ հանգուցեալ եղբօրից յետոյ կային նրա արու զաւակները, վերջիններիս միջեւ բաժանման միջոցին եւս կիսում էին շարժական եւ անշարժ գոյքը, այդ թւում հողը: Սակայն եթէ կային իդական սեռի զաւակներ, բաժանման ժամանակ նրանք ստանում էին շարժական գոյքի եւ այդիների կէսը, իսկ հողաբաժիններն ամբողջութեամբ մնում են կենդանի եղբօր օգտագործմանը: Մահացած եղբօր կինը, եթէ զաւակներ ունէր, ապրում էր կենդանի եղբօր

12 Անդ, 224:

13 Անդ:

հաշուին, բայց եթէ զաւակներ չունէր՝ վերադառնում էր հօր տուն եւ իրաւունք ունէր հետը վերցնել միայն իր օժիտը:<sup>14</sup>

Տղային բաժանելիս հայրը պարտական էր տալ նրան անկողին, պղնձեղինից կամ՝ անասունից այս կամ այն մասը, սակայն այդ իրերի նկատմամբ որդին իրաւունք չունէր ոչ մի պահանջ կամ նախապատութիւն ներկայացնելու։ Հողաբաժիններից, յատկապէս վարելահողից, հայրը պէտք է բաժին հանէր բաժանուող որդուն այնքան, որքան նրան հասնում էր հողի կամ հարկերի բաշխման համար ընդունուած սովորոյթի հիման վրայ։ Հակառակ դէպքում հասարակութիւնն իրաւունք ունէր իր հայեցողութեամբ հօր հողերից կտրել եւ այդ կտորը տալ բաժանուած որդու օգտագործմանը։<sup>15</sup>

Բաժանուած որդին եթէ հօր կենդանութեան օրօք չէր ստացել անշարժ գոյքից իր լիակատար բաժինը, նա իրաւունք ունէր այն ստանալու հօր մահից յետոյ, սակայն շարժական գոյքից նա ոչինչ չէր ստանում։ Գոյքը մնում էր այն եղբայրներին, որոնք ապրել էին հօր հետ նրա կենդանութեան ժամանակ։

Եթէ բաժանուած եղբայրները կրկին միանում էին եւ մէկ տնտեսութիւն կազմում, մի բան, որ յաճախ էր պատահում, երբ հօրեղօր որդիները որբ էին մնում, երկրորդ անգամ բաժանուելիս բաժանման էր ենթարկում միայն այն, ինչ որ նրանք ձեռք էին բերել միասին ապրելու ընթացքում։<sup>16</sup>

Ժողովրդական խօսուածքում տոհմ, գերդաստան, ընտանիք բառերը շատ բնակավայրերում փոխարինուած էին օջախ, տուն, ծովի եղրերով։ Զէին ասում մեր ընտանիքը մեծ է, այլ մեր օջախը, մեր տունը մեծ ա, մեր օջախում, մեր տանը այսքան տղամարդ ու կինարմատ կայ։ Ընտանիքի միասնութեան գաղափարը շաղկապուած էր ընդհանուր տան եւ ընդհանուր կրակի հետ։ Երբ մէկը բաժանուում էր եւ իր համար կառուցում էր առանձին տուն, ըստ աւանդոյթի, տան մեծն էր վառում նոր տան օջախը՝ իր մեծ տանից բերած կրակով։ Դրանով իսկ շեշտուում էր, որ թէեւ նրանք բաժանուել են, բայց օջախի ամբողջութիւնը պահպանում էր, արիւնակցական, աղդակցական շաղկապը դեռեւս մնում էր։ Այդ ամբողջութիւնը եւ միասնութիւնը

14 Անդ։

15 Անդ, 224-225։

16 Անդ, 225։

դրսեւորւում էր նրանց տնտեսական եւ կենցաղային փոխարաբերութիւններում։ Եղբայրների միջեւ աւագութեան կարգի վրայ հիմնուած յարգանքն ու պատկառանքը չէին դադարում նաեւ բաժանուելուց յետոյ։<sup>17</sup>

Շատ դէպքերում, երբ ժառանգ չկար, տուեալ ընտանիքը զաւակ էր որդեգրում, որին օրինական ձեւ էր տրուում գիւղական համայնքի որոշմամբ։ Որդեգրածը վայելում էր հարազատ զաւակի բոլոր իրաւունքները եւ կապւում ընտանիքի հետ նոյն պարտականութիւններով։ Նրան էին անցնում նաեւ մահացած սեփականատիրոջ հողաբաժինները, նոյնիսկ եթէ նա նոյն հասարակութեան անդամ չէր։ Որդեգրուում էր ոչ միայն տղայ, այլեւ աղջիկ երեխայ։ Երկու դէպքերումն էլ որդեգրածը չէր կարող ամուսնանալ ընտանիքի որեւէ այլ անդամի հետ։ Բնականաբար, նա դառնում էր ընտանիքի հարազատ, արիւնակից զաւակ։<sup>18</sup> Այսպիսով, պարզ է դառնում, որ քաղաքացիական փոխարաբերութիւններում, մասնաւորապէս՝ գոյքայինում, հայոց կանոնական իրաւունքը մեծապէս ազդուած է սովորութային իրաւունքից։

Քրիստոնէութիւնը պետական կրօն ճանաչուելուց յետոյ, ամուսնա-ընտանեկան յարաբերութիւնների կարգաւորման գործառոցթը տրուեց հայոց եկեղեցուն։ Վերջինս, ըստ էութեան, առաջադիմական նորմեր էր սահմանում, պայքարում հին սովորութիւնների դէմ, նոյնիսկ առանձին հարցերում ճգտում կնոջ ու տղամարդու իրաւունքներում սահմանել որոշակի իրաւահաւասարութիւն։

Պէտք է նշել, որ դեռեւս Ե. դարում եկեղեցական ժողովների որոշումներում առաջ էր քաշուել ամուսնութեան կամաւորութեան սկզբունքը, եւ այդ հարցում տղայի ու աղջկայ համաձայնութեան անհրաժեշտութիւնը։ Դա իր ժամանակին մեծ առաջադիմութիւն էր, ուր առկայ էր կնոջ շահերի պաշտպանութեան որոշակի երանգաւորում։ Այսպէս, Ս. Սահակ կաթողիկոսի (387-439) 27-րդ կանոնը արգելում էր տղային ու աղջկան իրենց կամքին հակառակ պսակելը, սահմանում էր, որ նրանք պիտի տեսնէին միմեանց եւ հաւանէին, որից յետոյ միայն կարող էին ամուսնանալ։ Այս սկզբունքը պաշտպանուել է նաեւ Մխիթար Գօշի Դատաստանագրքում Ա. մասի 91-րդ յօդուածը։

17 Անդ։

18 Անդ։

**Վերը նշուած նորմերը յաճախ գուգակցւում էին քրիստոնէական եկեղեցու դաւանանքին համապատասխան եկեղեցական այլ կանոններով։ Այսպէս, պսակի համար ծնողների համաձայնութիւնը պարտադիր էր (Բարսեղ. Մեծի 42րդ կանոն)։**

**Պոռնիկ էր համարւում այն կինը, որն առանց հօր համաձայնութեան (նոյնի կանոն 38) կամ այն աղախինը, որ պարոնի կամքին հակառակ (կանոն 40) ամուսնանում էր։ Շահապիւանի եկեղեցական ժողովը (444) սահմանելով ամուսնութեան կամաւրութեան սկզբունքը, միաժամանակ պարտադիր էր համարում հօր համաձայնութիւնը (կանոն 7)։ Ծնողների կողմից իրենց տղաների ու աղջիկների ամուսնութեան համար պարտադիր համաձայնութիւն սահմանելը փաստօրէն խախտում էր կամաւրութեան սկզբունքը, եւ այն մնում էր բարի ցանկութիւն։ Եթէ աղջիկն ու տղան տեսնելով միմեանց եւ հաւանելով ցանկանում էին ամուսնանալ, իսկ հայրը համաձայն չէր, ապա դրանով իսկ նրանց ամուսնութիւնը բացառում էր։**

**Կանոնական իրաւունքը կարեւոր քայլ էր մերձաւոր ազգականների միջեւ ամուսնութիւնների արգելման առումով։ Շահապիւանի եւ հետագայ եկեղեցական ժողովներն արգելում էին մերձաւոր արիւնակիցների միջեւ ամուսնութիւնը։ Եկեղեցին պաքար է մղել նաեւ մանկահասակների ամուսնութեան դէմ։ Ս. Սահակի եւ միւսների կանոններով արգելում էր դեռահասների պսակը, պատասխանատուութիւն էր սահմանուում այն ծնողների ու քահանայի համար, ովքեր մանկահասակներին պսակում էին։ Գօշի Դատաստանագրքի Ա. մասի Տրդ յօդուածում նախատեսել էր ամուսնութեան այնպիսի հասակ, որ ամուսինը բոլոր կողմերով կարողանայ տիրապետել կնոջը։ Ամուսնացողները պէտք է անպայման տեսնէին միմեանց եւ կամաւրութեան սկզբունքի պահպանութիւնը պարտադիր էր։ Եթէ նշանադրում էին դեռահասներին, ապա նրանք չափահաս դառնալով կարող էին լուծել իրենց ամուսնութեան հարցը՝ ուրիշի հետ ամուսնանալով (յօդուած 91)։**

**Եկեղեցին հետեւողական պայքար է մղել նաեւ ի պաշտպանութիւն՝ մենամուսնութեան՝ ճգտելով այդ համատեքստում արմատախիլ անել ամուսնական անհաւատարմութիւնը։**

**Թէեւ ամուսնական անհաւատարմութիւնը յաճախ ընկալում էր որպէս պոռնկութիւն, սակայն այն չունէր մարմնավաճառութեան իմաստ։ Պոռնկութիւնն իր իսկական իմաստով կնոջն**

անարգելու միջոց էր։ Այս հարցում իրաւական կանոնները կնոջ նկատմամբ աւելի խիստ պահանջկութիւն ունեին, քան տղամարդու, եւ ըստ էութեան տղամարդուն որոշակի արտօնութիւն էր տրւում։ Ամուսնական անհաւատարմութեան դէպքում տղամարդը կարող էր բաժանուել կնոջից, իսկ կինը չէր կարող այդ հիման վրայ թողնել ամուսնուն։ Այդ ամէնը պայմանաւորուած էր, հաւանաբար, սովորութային իրաւունքի ազդեցութեամբ, քանի որ քրիստոնէութիւնը, վստահաբար չէր քարոզում վերոնշեալ արժէքները։ Իբրեւ տոյժ, կինը կարող էր ամուսնու անհաւատարմութեան դէպքում ժամանակաւորապէս հեռանալ նրանից<sup>19</sup>։ Ամուսնական անհաւատարմութեան պատճառով անախորժութիւն առաջանալու դէպքում հարցը լուծւում էր տղամարդու համար արտօնեալ պայմաններով։ Եթէ տղամարդը չէր կարող տուն վերադառնալ եւ աշխատել, կնոջն ապահովել անհրաժեշտ միջոցներով, ապա այս դէպքում կինը կարող էր բաժանուել ամուսնուց, իսկ եթէ նա կնոջն ապահովում էր անհրաժեշտ ամէն ինչով, ապա կինը չէր կարող նրան թողնել, բայց կնոջ անհաւատարմութեան դէպքում ամուսինը կարող էր բաժանուել կնոջից<sup>20</sup>։

Այն դէպքում, երբ որեւէ մէկը նշանուած աղջկան խաթելով կենակցում էր նրա հետ, ապա պարտաւոր էր նրան կին վերցնել, իսկ եթէ աղջկայ հայրը համաձայն չէր աղջկան նրան կնութեան տալու, նա պարտաւոր էր աղջկայ հօրը վճարել գլխագին։ Իսկ եթէ տղան կամ նրա ազգականները չէին համաձայնուում այդ ամուսնութեանը, ապա գլխագինը վճարւում էր կրկնակի չափով։ Ուշագրաւ է այն հանգամանքը, որ այդ տուգանքը՝ գլխագինը, վճարւում էր ոչ թէ տուժող աղջկան, այլ՝ նրա հօրը։

Այն դէպքում, երբ տղամարդը զրպարտում էր կնոջը նրա հետ վատ յարաբերութեան մէջ գտնուելու պատճառով, յայտարելով, թէ նա մինչեւ յարաբերութիւնը կորցրել էր իր կուսութիւնը, պէտք է ստուգուէր դրա ճշտութիւնը։ Եթէ այդ մեղաղրանքում իրօք զրպարտութիւն կար՝ ճիպոտահարում եւ տուգանում էին ամուսնուն՝ կնոջ օգտին, իսկ ամուսնալուծութիւնը ցմահ արգելում էր։ Եթէ ամուսնու յայտարարութիւնը

19 ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Դատաստանագիրք, 104:

20 Անդ, 88:

ճիշտ էր, ըստ կանոնական իրաւունքի, կինը ենթակայ էր մահապատժի: Դատաստանագրքերը սահմանում էին նաեւ ապահարզան, եթէ ամուսինը չէր կարող հանդուրժել եւ ապրել իր կնոջ հետ: Կնոջը պատժելու հարցը այս դէպքում Սմբատ Սպարապետը թողնում էր նրա ծնողների հայեցողութեանը, իսկ Մխիթար Գօշը խորհուրդ էր տալիս այդ մասին չհրապարակել, քանի որ աղջկը զանազան պայմաններում կարող էր սխալուել (Ա. մաս, յօդ. 21 եւ Սմբատ Սպարապետ, Դատաստանագիրք, յօդ. 86):

Ամուսնութեան հարցը, ըստ էութեան, կնոջ ապատութեան եւ իրաւական վիճակի փաստական դրութիւնը բնութագրող հիմնախնդիր էր: Առանց ամուսնութեան իրաւունքի ամուսինների հաւասարութիւնը չէր կարող ապահովուել: Որպէս կանոն, կինը գտնում էր տղամարդու իշխանութեան ներքոյ: Այդ ամէնը պայմանաւորուած էր Աստուածաշնչեան հետեւեալ դրոյթով: «...Քո ամուսնուն պիտի ենթարկուես, եւ պիտի իշխի քեզ վրայ» (Ծնն Գ, 16):

Տղամարդն ապահարզանի աւելի լայն իրաւունք ունէր, քան կինը: Դրա հետ մէկտեղ նկատում էր ապահարզանի իրաւունքների հարցում տղամարդու եւ կնոջ իրաւունքների հաւասարեցման որոշակի միտում: Ապահարզանի օրինական հիմքի սահմանումը սկսուել է դեռեւ Ե. դարից եւ յետագայում այն նկատելիօրէն ընդգրկուել է Մխիթար Գօշի Դատաստանագրքում: Այն դէպքում, երբ տղամարդը շնաբարոյ էր եւ ուրիշ կնոջ վրայ աչք ունենալով արձակում էր իր կնոջն առանց ամուսնական անհաւատարմութեան կամ մարմնական արատի, պարտաւոր էր ամէն բան՝ հող, ջուր, տուն եւ այլն հաւասար կիսել կնոջ հետ: Կինը կարող էր ուրիշի հետ ամուսնանալ, սակայն այն պայմանով, որ իր բաժնեմասը յատկացնէր արքայական գանձարանին: Տղամարդ ամուսինը պարտաւոր էր 7 տարի սպասել եւ եկեղեցուն տուգանք վճարել: Ընդ որում, եթէ մինչեւ մէկ տարիին լրանալը նա ամուսնանար ուրիշ կնոջ հետ, ապա ստացում էր, որ ինքն է եղել ապահարզանի պատճառը, ուստի պէտք էր նրան ուղարկել ուրկանոց՝ մի տարի ցորեն աղալու, իսկ եթէ այդ կինը ազատներից էր, ապա նրան այդ պատժի փոխարէն տուգանում էին: Այդ պատիժը նպատակ ունէր ահարկել կանանց եւ արգելք հանդիսանալ նման տղամարդու հետ նոր պասկի դէպքում:

Այն դէպքում, երբ տղամարդը «դիւռոտ» էր կամ ստոր, նեղում էր կնոջը, չապահովելով անհրաժեշտ պարագաներով, կինը պէտք է համբերէր 7 տարի, որի ընթացքում նրա ծնողները փեսային դիտողութիւններ էին անում եւ պահանջում պահել կնոջը կանոնաւոր կամ բաժանուել նրանից: Եթէ կինն էր մեղաւոր, ապա նա էր ենթակայ պատժի: Այն դէպքերում, երբ կինը օրինական հիմքի վրայ թողնում էր ամուսնուն, նա յանձնում էր ամուսնուն՝ յաւերժ ստրկութեան: Եթէ բաժանուելու մեղքը տղամարդունն էր, ապա դատարանով եւ եկեղեցով նրան որոշակի խրատական էր տրում: Ընդ որում, եթէ փախչելուց յետոյ կինը ուրիշի հետ մեղանչել էր, ապա ամուսինը կարող էր թողնել նրան:<sup>21</sup>

Ամուսնական յարաբերութիւնները կարգաւորելիս հաշուի էր առնուում մեղաւորութեան սկզբունքը, ազնուութիւնը, անկեղծութիւնը, եւ այլ հանգամանքներ: Ահա դրանից մի քանիսը. եթէ ամուսինը տառապում էր այնպիսի հիւանդութեամբ, որ նրան զրկում էր ամուսնական պարտականութիւնները կատարելու հնարաւորութիւնից, սակայն ամուսնութեան ժամանակ այդ հանգամանքները թաքցրել էր՝ կինը կարող էր թողնել ամուսնուն: Այդ դէպքում կինը կարող էր վերցնել նրա գոյքի կէսը եւ ուրիշի հետ ամուսնանալ, իսկ ամուսինը պիտի երեք տարի ապաշխարէր:<sup>22</sup> Ամուսիններից մէկը դիւռոտ լինելու դէպքում հարցը լուծւում էր ելնելով այն բանից, թէ մինչեւ ամուսնութիւնն էր առաջացել, թէ ամուսնութեան ընթացքում, հիւանդ ամուսինն այդ մասին մինչեւ պսակուելը յայտնե<sup>23</sup> էր, թէ թաքցրել նրանից: Թաքցրած լինելու դէպքում կարող էր բաժանուել, իսկ չթաքցնելու դէպքում՝ ապահարզան չէր տրում: Եթէ հիւանդութիւնը ամուսնական կեանքի ընթացքում էր առաջացել, ամուսինը պարտաւոր էր համբերել 7 տարի:<sup>24</sup> Կնոջ շահերի պաշտպանութեանն էր ուղղուած այն կանոնը, որի համաձայն կնոջ հաշմանդամ դառնալու դէպքում ամուսինը պարտաւոր էր նրան ցմահ ապահովել, որից յետոյ միայն կարող էր ամուսնանալ ուրիշի հետ:

21 ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏ, Դատաստանագիրք, 105:

22 Կամոմագիրք հայոց, Կամոնք Դումայ սուրբ ժողովոյն, Բ., 201:

23 Ա.նդ:

24 Ա.նդ:

Կնոջ ազատութեան, կեանքի, առողջութեան, պատուի ու արժանապատութեան քրէական-իրաւական պաշտպանութիւնը հիմնականում տեղի էր ունենում սպանութեան, մարմնական վնասուածքներ պատճառելու, վիժման ու բռնավիժման, բռնութեան, առեւանգման եւ նմանատիպ այլ պարագաներում։ Թէեւ յանցագործութիւն երեւոյթը որոշելիս ելակէտ էին ընդունւում եկեղեցական գաղափարները, սակայն ժամանակի իրաւական միտքը բաւականին զարգացած էր, եւ հիմնական գծերով ճիշտ էր լուսաբանւում յանցագործութիւն հասկացութիւնը եւ պատասխանատութիւնը, որի հիման վրայ էլ սահմանուել էին համապատասխան պատժամիջոցներ։ Որպէսզի այդ պատկերն առաւել յստակ ներկայացնենք, փորձենք ամփոփ քննարկել քրէական բնոյթի այդ կանոնները։

## ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Սպանութիւնն անօրինական կերպով ուրիշին կեանքից զըրկելն է, որի շարժառիթները եւ նպատակները տարբեր էին։ Դըրանք ստորաբաժանւում էին հետեւեալ կերպ դիտաւորեալ սպանութիւն (իր ստորաբաժանումներով), անզգոյշ եւ պատահական սպանութիւն։ Մարդն ազատ կամք ունի եւ ինքնիշխան է. նա կազմուած է մարմնից եւ հոգուց, սին է աշխարհը, հոգին՝ յաւերժ։ Մարմնի վրայ իշխում է սատանան եւ օգտուելով դրանից, որ մարդու կամքը թոյլ է, դրդում է մեղանչելու, յանցանք կատարելու։ Զարագործութիւնը յարաբերական է, երբ սպանում են չարին՝ դա բարի է, իսկ երբ անզէնին են սպանում՝ չարագործութիւն է։ Մարդու անձնիշխանութիւնն անցնում է ժառանգաբար։ Սակայն անձնիշխանութիւնը բացարձակ չէ, այն սահմանափակում է Աստծու պատուիրաններով՝ բարոյական նորմերով։ Այս գլխաւոր սկզբունքի վրայ էին հիմնուած՝ թէ՛ կանոնական իրաւունքը եւ թէ՛ դատաստանագրքերը (Միսիթար Գօշի Դատաստանագիրք, Նախադրութիւն, գլուխ 1, 2, 3)։ Սակայն Գօշը շատ դէպքերում կանգնում էր մեղքի անհատականացման տեսակէտի վրայ։ Նա տեսնում էր բնական եւ օրինական հիմքեր. եկեղեցական կանոնները նա համարում էր հոգու, իսկ Դատաստանագիրք՝ մարմինը ուղղելու միջոց, որոնք չեն ձուլում, բայց եւ չեն բաժանում, շատ դէպքերում էլ համընկնում են։ Անհատականացման սկզբունքը քրիստոնէութիւնը շատ վաղուց էր ընդունել՝ «Ամէն ոք պիտի պատժուի իր կատարած յանցանքի եւ

**մեղքի չափով» (ԲՕ ԻԴ, 16): Քրիտոնէութիւնը յանցագործութիւնը համարում է Աստծու անխախտ պատուիրանի կամայական խախտում, իսկ պատիժը հատուցումն է այդ խախտման դիմաց:<sup>25</sup> Թէեւ իրաւական միտքը ընդունում էր պատասխանատութեան անհատականացման սկզբունքը, սակայն դրանից շեղուելու հնարաւորութիւնը չէր բացառուած: Օրինակ, խիստ պատիժ սահմանելով հայրենիքի դաւաճանների եւ պետական գանձարանից գողութիւն կատարողների նկատմամբ, միաժամանակ իրաւունք էր վերապահուել նրանց կանանց եւ երեխաններին վերցնել ստրկութեան կամ վաճառել: Դա նշանակում է, որ տուեալ ժամանակաշրջանում նման յանցագործութիւնները տարածուած էին եւ լուրջ վտանգ էին ներկայացնում, իսկ ընտանիքի անդամներին պատժելը դիտուել է իբրեւ պայքարի արդիւնաւէտութիւնը բարձրացնելու միջոցներից մէկը:**

Իրաւական միտքը սպանութիւնները բաժանել է երեք խըմբի՝ ակամայ (ոչ դիտաւորեալ), կամաւոր (դիտաւորեալ) եւ խառը: Հստ Մխիթար Գօշի, ակամայ սպանութիւն է, երբ սկեսուրը խրատելու կամ դաստիարակելու նպատակով հարսին այնքան է ծեծում, որ հասցնում է մահուան դուռը: Դա ցոյց է տալիս, որ տուեալ ժամանակաշրջանում սկեսուրը հարսին ծեծելու իրաւունք է ունեցել եւ դրա համար շատ մեծ պատասխանատուութեան է ենթարկուել միայն այն դէպքում, երբ ծեծի հետեւանքով մահ է առաջացել: Տէրը՝ պարոնը, ծառային կամ աղախնին այնքան է ծեծում, որ ուժից վեր է լինում եւ մահանում է: Նշանակում է, որ տէրը՝ պարոնը, աղախնին «խրատելու», այսինքն՝ ծեծելու իրաւունք է ունեցել եւ պատասխանատուութիւնը միայն այն դէպքում է առաջացել, երբ մահ կամ մարմնական ծանր վնասուածք է պատճառուել: Տուեալ դէպքում Մխիթար Գօշ շփոթել կամ նոյնացրել է սպանութիւնը եւ մարմնական ծանր վնասուածքի հետեւանքով մահուան հասցնելու հանգամանքները:

Որոշակի կանոններով պայքարելով սպանութիւնների դէմ, դրանով իսկ պաշտպանում էր նաեւ կնոջ կեանքը: Կնոջ անհաւատարմութեան դէպքում ամուսինը կարող էր բաժանուել նրանից, սակայն նրան սպանելու իրաւունք չունէր: Եթէ տղամարդը կնոջը սպանում էր իր չար բնաւորութեան հետեւանքով,

25 Տե՛ս ԹՈՎՄԱՍԵԱՆ, Ա. Թ., Հիմ եւ միջնադարեան հայ քրէական իրաւունք, Երևան 1962, 231:

ապա ենթակայ էր երկակի պատժի: Նոյնպիսի պատժի ենթակայ էր կինը, եթէ սպանում էր ամուսնուն:<sup>26</sup> Նման սպանութիւնների դէպօւմ պահանջւում էր մանրամասնօրէն ստուգել եւ պարզել մարդասպանի եւ տուժողի կեանքի պայմանները՝ ապրելակերպը. Եթէ անհաւատարմութիւնը կատարուել էր թեթեւամտութեան կամ տանջալից պահանջի պատճառով կամ ամուսինը եղել է այլասերուած, որի հետեւանքով էլ կինը նման քայլ էր կատարել, ապա մարդասպանին պիտի պատժէին իբրեւ մեծ եղեռնագործի եւ վերցնէին արեան գինը: Եթէ նման փաստեր չկային, եւ ամուսինը կնոջը լաւ էր պահել եւ ամէն ինչ բնականոն էր եղել, սակայն կինն անառակութիւն էր արել եւ շռայլել էր ունեցուածքը, որի համար էլ ամուսինը սպանել էր նրան, ապա պատիժը պիտի մեղմ լինէր:<sup>27</sup> Տուեալ դէպօւմ նկատի էր առնւում պատասխանատուութիւնը խստացնող եւ մեղմացնող հանգամանքների առկայութիւնը կամ բացակայութիւնը: Այն դէպօւմ, երբ կինն սպանում էր իր մարդուն, կամ սիրեկանի միջոցով նրան սպանել տալիս, ապա կնոջը պէտք էր մահապատժի ենթարկել, եւ չէր կարելի ներողամիտ լինել, քանի որ նման դէպօւմ դա վատ օրինակ կը լինէր եւ շատ կանայք կը փորձէին դիմել այդ քայլին:

Երբ ամուսինը կնոջը բռնում էր սիրեկանի մօտ եւ երկուսին էլ սպանում, ապա աշխարհիկ դատարանին այն ենթակայ չէր, իսկ եթէ մէկին էր սպանում՝ ենթակայ էր մարդասպանի պատժին: Նման մօտեցումը բացատրում էր նրանով, որ տուեալ դէպօւ կարող էր արհեստականօրէն կազմակերպուած լինէր վրէժի նպատակով կամ կնոջից ազատուելու համար:<sup>28</sup>

Դաւիթ Ալաւկայ որդու ՀԹ. կանոնը սահմանում էր, որ քահանան պիտի կոյսի հետ ամուսնանայ, եթէ աղջիկը կոյս չի լինում, ապա նրան չպէտք է միւսների նման քարկոծելով սպանել, այլ կրակով այրել, իբրեւ օրինակ գեհենի: Այն դէպօւմ, երբ կինը ճանապարհին ծնուած երեխան ձգում է, ապա պիտի պատժել որպէս մարդասպանի (Բարսեղ Մեծ, կանոն 52): Երբ ծնողները երեխային կամ մարդը կնոջը խնամքով են խրատում (ծեծում), բայց մահ է առաջանում, ենթակայ է պատժի, իսկ եթէ գազանաբար է խրատում եւ սպանում, ապա աւելի խիստ

26 ՄԽԻԹԱՐ ԳՕՇ, անդ, 115:

27 ԱՄԲԱՏ ՍՊԱՐՄՊԵՏ, Դատաստանագիրք, 93:

28 Անդ, 94:

պատժի է ենթարկւում։ Նոյնպէս խիստ պատժի է ենթարկւում կինը, եթէ թունաւորում է ամուսնուն (Դաւիթ Ալաւկայ որդի, կանոն ԾԷ.): Այստեղից հետեւում է, որ ամուսինը կնոջը ծեծելու իրաւունք է ունեցել եւ պատժի է ենթարկուել միայն ծեծի հետեւանքով մահ առաջանալու եւ երեխային խեղդելու դէպքերում։ Եթէ դրա նպատակն ազատ լինելն էր պոռնկութեամբ զբաղուելու ակնկալիքով, ապա այդ դէպքում սահմանուում էր մահապատիժ։

## ՄԱՆՐ ՎՆԱՍՈՒԱԾՔՆԵՐ

Եկեղեցին կանոնային իր նորմերով նաեւ լուրջ ուշադրութիւն է դարձրել կնոջը մարմնական ծանր վնասուածքներ պատճառելու խնդրին։ Եթէ ամուսինն իր չար բնաւորութեան հետեւանքով ջարդում էր կնոջ ձեռքը կամ ոտքը, կամ հանում աչքը, կամ ատամը, եւ կամ նրան անդամահատում էր՝ նրան պատժում էին այնպէս, ինչպէս օտարին, սակայն պատժաչափը պէտք է լինէր կրկնակի, որպէսզի ամուսինը հասկանար, որ կինը իր մարմնի կէսն է եւ ոչ թէ հարճը։ Տուգանքը գանձւում էր յօդուտ տուժուողի։ Եթէ մարդը յանցագործ էր եւ դրա հետ միասին՝ կնոջ կեանքին վտանգով էր սպառնում, այդ դէպքում թոյլ էր տրւում ամուսնալուծութիւն՝ որպէս կնոջ կեանքի փրկութեան միջոց։<sup>29</sup> Օրէնքների եւ կանոնների առկայութիւնը, ի հարկէ, վկայում էին, վերոնշեալ փաստերի առկայութեան մասին, սակայն ժողովրդական սովորոյթով, տուեալ դէպքում Զանգեզուրի օրինակով (որ համահայկական երեւոյթ էր), կնոջ վրայ ձեռք բարձրացնելը, կնոջը ծեծելը տղամարդուն չսագող անվայել արարք էր համարւում։ Սովորաբար բարկացած տղամարդը դիմում էր հայհոյանքին եւ այդ ժամանակ հասցէատէրը ե՛ւ կինն էր, ե՛ւ նրա հայրն ու մայրը, ե՛ւ նրա բոլոր ազգականները, սակայն կնոջը ծեծելը, նրա վրայ ձեռք բարձրացնելը շատ սակաւ դէպքերում էր տեղի ունենում։ Զանգեզուրում, ինչպէս նաեւ այլ գաւառներում, կինը ամուսնուց ծեծուելը չէր համարում նրա կողմից սիրոյ նշան, ինչպէս որ այն ընկալւում էր ոուսազգի կնոջ կողմից, որն իր դըսեւորումներն ունէր սովորութային իր

համալիրում. Եթէ ամուսինն իրեն չի ծեծում, ուրեմն՝ չի սիրում:<sup>30</sup>

### ՎԻԺՈՒԱՄ

Հայոց աւանդական հասարակարգում յղի կնոջ վիժումը դիտուել է որպէս խիստ վտանգաւոր յանցագործութիւններից մէկը: Բարսեղ Մեծի 2րդ կանոնը սահմանում էր, որ գիտակցաբար արգանդի պտուղը ոչնչացնելը, անկախ նրա զարգացման աստիճանից, համահաւասար էր մարդասպանի պատժին: Ընդ որում, այդ գործում մեղաւոր կինը պատժում էր ոչ միայն պտուղը ոչնչացնելու, այլեւ իր կեանքը վտանգի ենթարկելու համար: Դաւիթ Ալաւկայ որդու ԽԸ. կանոնը պատիժ էր նախատեսում ոչ միայն իր արգանդում պտուղը ոչնչացնող կնոջ համար, այլեւ դրդողների, օժանդակողների եւ իմացող-չյայտնողների համար: Վերջինս նոր հասկացութիւն էր, որ մուտք էր գործել օրէնսդրական կանոններում: Խիստ պատասխանատուութիւն էր սահմանում յղի կնոջը հարուածելու եւ վիժում առաջացնելու համար: Սակայն Դատաստանագրքերն այս հարցում աւելի առաջ են ընթանում եւ ճշգրտում խնդիրը: այդ պատասխանատուութեան հարցը որոշելիս ելակէտ էր ընդունուում պտղի զարգացման աստիճանը՝ ձեւաւորուած լինելը կամ չլինելը: Եթէ պտուղը դեռեւս ձեւաւորուած չէր, ապա յանցաւորը վճարում էր արեան գնի կէսը եւ ապաշխարում, իսկ եթէ երեխան արդէն ձեւաւորուած է եղել՝ գործում էր՝ կեանքի դիմաց կեանք օրէնքը: Այդ սկզբունքի կողմնակից էր յատկապէս Սմբատ Սպարապետը, իսկ ըստ Մխիթար Գօշի, այն կարելի էր փոխհատուցել տուգանքով եւ ապաշխարանքով:<sup>31</sup>

### ԲՈՆԱԲԱՐՈՒԹԻՒՆ

Բոնաբարութիւնը համարւում է կնոջ կամքին հակառակ նրա հետ սեռական յարաբերութիւնը: Նոյնիսկ հայոց աւանդական կենցաղում բոնաբարութիւնը համարւում էր լուրջ եւ վտանգաւոր յանցագործութիւն: Սակայն բոնաբարութիւնը շատ յաճախ կապւում էր կնոջ առեւանգման, ամուսնութիւնից առաջ կուսութիւնը կորցնելու եւ այլ հանգամանքների հետ: Եթէ կոյսին առեւանգողը ծածուկ կամ բռնութեամբ խախտում էր աղջ-

30 ԼԻՍԻՑԵԱՆ, Ա, թշ. աշխ., 220-221:

31 ՄԽԻԹԱՐ ԳՕՇ, անդ, 128:

կայ կուսութիւնը, ապա նա անառակների պատժին էր դատապարտում (Բարսեղ Մեծ, կանոն 22): Ամուսնութիւնից առաջ նշանածի կամ օտարի կողմից նշանուած աղջկայ կամքին հակառակ կուսութեան խախտման դէպքում աղջկան վերադարձնում էին ծնողներին, իսկ առեւանգողը տուգանուում էր: Տուեալ պարագայում, տուգանուում էին նաեւ առեւանգման աջակիցները:

Մխիթար Գօշի եւ Սմբատ Սպարապետի Դատաստանագործքնում որոշ տարբերութիւններ կային բռնաբարութեան վերաբերեալ սահմանուած պատիժների կապակցութեամբ: Զնշանուած աղջկայ բռնաբարութեան համար պատիժը նոյնն է, ինչ որ կնոջ բռնաբարութեան համար էր նախատեսուած: Ըստ Մովսիսական օրէնքների, բռնաբարողը պէտք է աղջկայ հօրը վճարէր 52 արծաթ դրախմ, իսկ տուժողին ցմահ կին վերցնէր: Դատաստանագիրքը հետեւեալ կերպ է լուծում հարցը՝ յանցաւորը ամուսնում է տուժողի հետ առանց օժիտի եւ անբաժանելի ամուսնութեամբ, եթէ նա այդ չի ցանկանում, ապա պէտք է վճարի այն, ինչ որ նախատեսուած է բռնաբարութեան համար:<sup>32</sup> Այն դէպքում, երբ տղամարդը որեւէ կնոջ տանում է ուրիշի տուն եւ բռնաբարում, ապա ենթակայ է մահապատիժ կամ պէտք է կըտրել նրա սեռական անդամը: Եթէ այդ կինն էր նրան կանչել, ապա ենթակայ է մարմնական պատժի եւ տուգանքի, կամ ամուսնու համաձայնութեան դէպքում՝ քիթը կտրելու: Այն դէպքում, երբ տղամարդը մերկացւում էր անասնամոլութեան մէջ, ապա որպէս պատիժ սահմանուում էր կտրել նրա սեռական օրգանները եւ ուղարկել եկեղեցի՝ ցմահ ապաշխարանքի: Կոյսին առեւանգելու եւ բռնաբարելու դէպքում պատասխանատուութիւնը սահմանուում էր ելնելով այն բանից, թէ նա նշանուած էր, թէ ոչ: Եթէ նշանուած էր, պատիժը նոյնն էր, ինչ որ կնոջ բռնաբարութեան համար էր սահմանուած (յօդ. 94): Եթէ նշանուած չէր, ապա յանցաւորին պարտաւորեցնում էին տուժողի հօրը վճարել մեծ տուգանք եւ ամուսնանալ տուժողի հետ: Հակառակ դէպքում, եթէ չի ամուսնանում, կտրում էին բռնաբարողի սեռական անդամը:

Զքաւոր աղջկան բռնաբարելու դէպքում, հարցը քննում եւ լուծում էր պարոնը: Ընդ որում, եթէ արարքը հարկադրաբար էր տեղի ունեցել, ապա սահմանուում էր յանցաւորին խեղանդամել, իսկ կամաւորութեան դէպքում՝ ցուցաբերւում էր որոշակի

**ներողամտութիւն:** Եթէ աղջկան առեւանգում էին եւ արդիւնքում՝ ամուսնանում, ապա նրանց երեխաները համարւում էին ոչ օրինածին, իսկ բռնուելու դէպքում աղջկան վերադարձնում էին ծնողներին, իսկ յանցաւորի սեռական օրգանները կտրում էին:<sup>33</sup> Երբ պարոնը բռնաբարում էր աղջկան, ապա նա պատասխանատուութեան չէր ենթարկւում, իսկ տուժողը ազատւում էր պատժից, քանի որ կուսութիւնը կորցրել էր իր կամքից անկախ:

**Այսպէս,** հայոց իրաւական կանոնները, ընդգծուած սոցիալական անհաւասարութիւններով հաղերձ, իրենցում պարունակում էին առաջադիմական որոշակի նորմեր, մասնաւորապէս՝ կնոջ ազատութեան, կեանքի, առողջութեան, պատուի ու արժանապատութեան պաշտպանութեան խնդիրներում։ Մշակուել էին շատ կարեւոր իրաւանորմեր, որոնք միտուած էին կնոջ իրաւունքների պաշտպանութեանը ընդհանրապէս, եւ մասնաւորապէս՝ ամուսնաընտանեկան յարաբերութիւնների կարգաւորման համատեքստում։

ԱՆՌԻՇԱԽԱՆ ԵՊՍ. ԺԱՄԿՈՉԵՍՆ

### Summary

## THE JURIDICAL STATUS OF WOMEN IN THE CONTEXT OF THE CHURCH AND POPULAR COMMON RIGHTS

BISHOP ANUSHAVAN JAMKOCHYAN

Along with emphasising social inequalities, the juridical laws of the Armenian tradition contain certain principles concerning clauses on the protection of freedoms and choice, on life, health, honour and self-esteem of women. Related to the main norms of the Holy Bible, they are constructed taking into account that the man is the steward and host of the woman, consequently she might not represent her own interests in a court or be a judge or even a witness, or serve in the army, sell something in the market, etc. Nevertheless, a tendency to prescribe to women certain rights concerning inheritance, private property and real estate is clear in the canons of the Armenian Church developing until the 12th century laws by Mkhitar Gosh and Davit Alavkavordi.

To the domain of the protection of women's rights belonged such norms as the obligation of a man to take care of his sick or physically-challenged wife and not marry before her death and the obligation to sustain and never abandon a childless wife.

Laws regulating relations around criminal deeds towards women relate to such areas as domestic violence (including homicide and disabling), rape, abortion, and the kidnapping of women and girls. The punishments and penalties prescribed for those crimes, although aimed at the maintenance of existing families and the prevention of possible vengeance by blood (willingly marrying after rape in the case of agreement by both parties could, for instance, ease the penalty for rape or kidnapping), they sometimes still reveal the influence of old popular common law, including punishments by death or cutting out genitalia. In every case, however, an investigation of circumstances and possible unreliable witnesses was prescribed. Severe repurcusions for men in cases of domestic violence, the obligation of asking a girl about her willingness to marry a given man, prevention of vengeance by blood in the cases of misconduct within the family, etc., were progressive steps towards the protection of women's rights, certainly advanced in the context of medieval culture.